

Հայոց լեզու մարզային փուլ - Պատասխաններ

12-րդ դասարան

1. Գալիս է հին հռոմեացիների Յանուս աստծու անունից: Յանուսը աստվածն էր արևի ընթացքի, մուտքերի և ելքերի, սկիզբների ու վախճանների, դռների և դարպասների, տարվա և ժամանակի: Պատկերվում էր երկու երեսով՝ ծեր և երիտասարդ, որոնցից մեկն ուղղված էր անցյալին՝ անցնող տարվան, մյուսը՝ ներկային՝ եկող տարվան: Այստեղից էլ առաջացել է «Երկերեսանի Յանուս» թևավոր խոսքը:

2. ուրարակիր

Ուրար- նեղ ու երկայն, մոտ 3 մ երկարությամբ և 10–12 սմ լայնությամբ գունավոր և ծաղկավոր երիզ է, որն ուրարակիրն ու [սարկավազը](#) կրում են իրենց ձախ ուսի վրա: Ուրարը սովորաբար ունենում է 3 խաչ. մեկը՝ ուսի վրա՝ մեջտեղում, մյուս երկուսը՝ հետևից ու առջևից: Ձախ ուսին ուրար կրելը նշան է, ըստ որի՝ այդ կրոնավորը Քրիստոս Աստծու լուծը միայն կիսով չափ է իր վրա կրում և տակավին կարողություն չունի ամբողջությամբ ստանձնելու:

3. **Սարկավազ-** կուսակրոն կրտսեր սպասավոր [վանքերում](#): Նրա հիմնական պարտականություններն են՝ խնկարկել, [պատարագին Ավետարան](#) կարդալ, ժողովրդին [քարոզներով աղոթքի](#) առաջնորդել: Սարկավազի բացակայության դեպքում այդ պարտականությունները կատարում է [քահանան](#) նրա հագուստներով:

Եպիսկոպոս- եկեղեցու նվիրապետության բարձրագույն աստիճանն է, դարձյալ վկայակոչված սուրբ գրքով: Առաքելական ժամանակներում եպիսկոպոսները նշանակվում և ձեռնադրվում էին անմիջապես Քրիստոսի առաքյալներից՝ որպես իրենց իրավահաջորդներ: Հունարենից թարգմանաբար **եպիսկոպոս** նշանակում է *հսկիչ, վերնից նայող*:

Աբեղա- հայոց եկեղեցու կուսակրոն հոգևորականության ամենացածր աստիճանի վանական: Աբեղան իր գործունեությամբ և հագուստով հիմնականում նման է [քահանային](#), բայց ի տարբերություն վերջինիս՝ կարող է ձեռնադրվել [վարդապետ](#), [եպիսկոպոս](#) և [կաթողիկոս](#): Նաև գիտական աշխատանք կատարելու դեպքում աբեղաները ձեռնադրվում են [վարդապետ](#), ինչը եկեղեցական գիտական աստիճան է:

Վարդապետ- ոչ ամուսնացյալ քահանան՝ աբեղան, գիտական աշխատանք կատարելուց հետո կարգվում է վարդապետ, ինչը եկեղեցական գիտական աստիճան է: Վարդապետի տարբերակիչ նշաններից է ականակուռ լանջախաչը և վարդապետական գավազանը՝ երկգլխանի օձով, որը խորհրդանշում է իմաստություն և ուսուցանելու ու քարոզելու իրավունք:

4. **դպիր-** գրագիր, տիրացու, մոնթ, ատենադպիր

բուրվատ- խնկաման, խնկածխիչ

խնկարկել- խնկել, մեծարել, երկրպագել, աստվածարել (փխբ)

շուրջատ- պարեգոտ, սքեմ, պատմունճան...

փիլոն- անթև կրոնական հագուստ, շուրջատ

երե- որսի խոտակեր կենդանի

հագարացի- արար

6. **Կաթողիկոս-** ծագում է հունարեն լեզվից և նշանակում է *ընդհանրական, համընդհանուր*:

7. «Կա՛մ վահանով, կա՛մ վահանին»

Հին աշխարհի կանայք հարազատներին կովի ուղարկելու հույսով ու հավատով մրմնջում էին մաղթանքի սուրբ խոսքեր՝ հետևյալ սուրբ բառերով. «Կա՛մ վահանով, կա՛մ վահանին»: Մա նշանակում էր կա՛մ վահանը ձեռքին՝ հաղթանակած վերադառնալ, կա՛մ հերոսաբար գոհված: